
ԱԼՈՅԱՆ Լ.Ա., «Մշակ» լրագրի հրապարակախոսությունը 1905-1921 թթ., «Ոսկան Երևանցի» հրատ., Ե., 2003, 150 էջ:

Հայ լրագրության ավելի քան երկուհարյուրամյա հարուստ պատմության մեջ իր մնայուն հետքն է թողել «Մշակ» թերթը, որը կես դար շարունակ (1872-1921թթ.) տպագրվելով Թիֆլիսում և լինելով անցյալի հայ մամուլի առաջադիմական օրգանը՝ մեծ դեր է կատարել մեր ժողովրդի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքում, նպաստել գրականության ու արվեստի զարգացման, լուսավորության ու քաղաքակրթության տարածման գործին:

Հրապարակախոսության ասպարեզում ևս «Մշակը» հայ իրականության մեջ աչքի է ընկել իր ազատամիտ գաղափարներով և մեծապես ազդել է հասարակական կարծիքի ձևավորման վրա: Մշտապես ընթանալով իրադարձությունների առջևից և ուղղություն տալով դրանց զարգացմանը՝ թերթը իր լուրջ ներդրումն է ունեցել նաև մեր ազգային գաղափարախոսության մշակման գործում:

Սակայն հայ ժողովրդի կյանքում հսկայական դեր խաղացած այս թերթը մեր բանասիրության ու պատմագրության կողմից դեռևս լիարժեք չի ուսումնասիրվել, և առայժմ չի ստեղծվել նրա ամբողջական պատմությունը: «Մշակի» մասին եղած գրքերը փոքրաթիվ են, որոնցից հատկապես աչքի են ընկնում Լեոյի «Գրիգոր Արծրունի» եռհատորյակը (Թիֆլիս, 1902-1905), Լ. Դանիելյանի և Խ. Մալումյանի (Էդ. Ակնունի) «Մշակի» քառասնամյակին նվիրված հոբելյանական հրատարակությունները (Թիֆլիս, 1912), ինչպես և Մ. Հ. և Ա. Ս. Բաբայանների կազմած «Մշակ» լրագիրը (1872-1875 թթ.) » մատենագիտությունը (Ե., 1975): Թվարկվածներին պետք է ավելացնել նաև անցյալի մեր մամուլի նորօրյա ճանաչված ուսումնասիրող Լիդա Գևորգյանի վերջերս լույս ընծայած «Գր. Արծրունի և նրա «Մշակը»» (Ե., 1996) արժեքավոր մենագրությունը:

Հրապարակի վրա եղած այդ գրքերը, սակայն, «Մշակ» թերթի ամբողջական պատկերը չեն տալիս: Դրանք կամ նվիրված են «Մշակի» հիմնադիր Գրիգոր Արծրունու (1845-1892) կյանքին ու գործունեությանը, կամ էլ նրա խմբագիր եղած շրջանի (1872-1892թթ.) «Մշակի» պատմությանը: Այդ թերթի վերջին երեք տասնամյակների գործունեությունը երկար ժամանակ ուսումնասիրողների տեսադաշտից դուրս էր մնացել: Դա մի ժամանակաշրջան է, որն հարուստ է հասարակական-քաղաքական խոշոր իրադարձություններով ու աշխարհացունց հեղաբեկումներով, որոնք, այսպես թե այնպես, աղետաբեր եղան հայ ժողովրդի ու Հայաստանի համար: Թուրքերի կողմից այդ ընթացքում կազմակերպվեց Հայոց մեծ եղեռնը և աշխարհի քարտեզի վրայից ջնջվեց Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանի մի զգալի մասը բռնակցվեց Ադրբեջանին ու Վրաստանին, և հայ ժողովուրդը, փաստորեն, մեծ կորուստներով դիմավորեց Անդրկովկասի խորհրդայնացումը: Այդ ընթացքում, ընդհուպ մինչև Վրաստանի խորհրդայնացման առաջին օրը՝ 1921թ. փետրվարի 25-ը, Թիֆլիսում շարունակում էր լույս տեսնել «Մշակը», որ Գր. Արծրունու մահից հետո, մոտ երեք տասնամյակ խմբագրեցին Ալեքսանդր Քալանթարը (1895-1913 թթ.), Համբարձում Առաքելյանը

(1913-1918 թթ.), Տիգրան Հախումյանը (1918-1919 թթ.) և Լենն (Առաքել Բաբախանյան, 1920-1921 թթ.): Նրանցից յուրաքանչյուրն իր գաղափարական կնիքն է թողել «Մշակի» գործունեության վրա:

Այս շրջանի «Մշակը», որ չափազանց հարուստ է ու բազմաբովանդակ, դեռևս լիարժեք չի ուսումնասիրվել: Այդ բացը ժամանակին մասամբ լրացնելու եկավ Լենդրուշ Ալոյանի «Գրականության, արվեստի և լուսավորության հարցերը 1892-1905 թթ. «Մշակ» լրագրում» (Ե., 1989) գրկույքը, որտեղ հեղինակը փորձում էր տալ հիշյալ թերթի՝ շուրջ 15 տարիների գործունեության պատկերը: Օրերս լույս տեսավ նրա նոր մենագրությունը՝ նվիրված «Մշակի» գոյության վերջին մեկուկես տասնամյակի (1905-1921 թթ.) հրապարակախոսության քննությանը, որով նա իր նախորդ աշխատության հետ մեկտեղ ի մի է բերում այդ թերթի հետարժրունիական շրջանի (1893-1921 թթ.) պատմությունը:

Լ. Ալոյանի գիրքը բաղկացած է ներածությունից ու երեք գլուխներից, որոնց մեջ հեղինակը թերթի հրապարակումների, արխիվային նյութերի ու եղած գիտական գրականության համադրական վերլուծություններով փորձում է որոշել «Մշակի» տեղը անցյալ դարասկզբի հայ հրապարակախոսության զարգացման ասպարեզում: Հեղինակը ներածության մեջ հանգամանորեն ներկայացնում է «Մշակի» ազատական գաղափարները, որոնց քարոզչությամբ թերթը նշանակալիորեն նպաստել է հայության ազգային համախմբմանը, նրա հոգևոր ու մտավոր զարգացմանը, ինչպես և հայ իրականության մեջ առաջավոր հասարակական ու քաղաքական մտքի տարածմանը:

Գրքի առաջին գլուխը, որ կրում է «Հայկական հարցը «Մշակի» էջերում» վերնագիրը, ամբողջությամբ նվիրված է արևմտահայության ազատագրության ուղիների որոնման ու Հայ դատի արդարացի պաշտպանության համար թերթի գործադրած ջանքերի վերհանմանն ու այդ թեմաներով նրա հրապարակումների վերլուծությանը: Հեղինակը փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտել է «Մշակի» ուրույն դերը արևմտահայության ազատագրության, Օսմանյան Թուրքիայի բռնապետական պայմաններում նրա ազգային, տնտեսական ու իրավական կացությունը լուսաբանելու գործում: Նորովի ու համոզիչ փաստերով են ներկայացվում հայ ազատական մամուլի և հրապարակախոսության՝ դարասկզբի առաջին երկու տասնամյակների կողմնորոշումները, նպատակներն ու բովանդակությունը: Դրանք ամբողջացվել են «Մշակի» սկզբունքային այնպիսի դիրքորոշումների մեկնաբանություններով, ինչպիսիք են լայնախոհ մոտեցումը ազգային հարցի, Ռուսաստանում և Անդրկովկասում առկա տնտեսական ու քաղաքական իրողությունների, հեղափոխական շարժումների և այլ իրադարձությունների նկատմամբ:

Գրքում հետևողական քննության են առնվել սոցիալիզմի և սոցիալիստական շարժումների նկատմամբ «Մշակի» հրապարակումներում եղած տեսակետները: Ազգային հարցի հետ դրանց ունեցած առնչությունների վերլուծությամբ Լ. Ալոյանը ցույց է տվել «Մշակի» և առհասարակ, հայ ազատականության վերաբերմունքը ազգային կուսակցությունների և նրանց գործունեության նկատմամբ: Հարուստ են, մասնավորապես, հեղինակի

վկայակոչած այն փաստական նյութերը, որոնք վերաբերում են «Մշակի» և նրա հրապարակախոսների դիրքորոշումներին՝ կապված Առաջին համաշխարհային պատերազմի, հայկական կամավորական շարժման, Ռուսաստանում հեղափոխական իրադարձությունների ծավալման, Բաքվի 1918 թ. դեպքերի հետ: Հետաքրքիր դիտարկումներ կան նաև երիտթուրքերի կազմակերպած և իրականացրած ցեղասպանության, Արևմտահայաստանը հայաթափելու հետ կապվող իրողությունների մշտական լուսաբանումների վերլուծություններում: Լուրջ հետաքրքրություն են առաջացնում երկրամասը թուրքական լծից ազատագրելու գործում «Մշակի» ռուսական կողմնորոշման գաղափարագործնական հիմքերի բացահայտման ու հայ ազատականության պատկերացումների մեկնաբանությունները:

«Ռեֆորմների գաղափարաբանությունը թերթում» վերտառությունը կրող երկրորդ գլխում վերլուծվում են արտադրության և արդյունաբերության բարեփոխումների, գյուղատնտեսության զարգացման, պետական, հասարակական, գիտակրթական և մշակութային կառույցների ու եկեղեցու հարաբերությունների խնդիրները, ինչպես և հեղափոխության ու սոցիալիզմի հարցերը: Այստեղ հատկապես առանձնանում է «Մշակի» ազգային անկախության գաղափարի, Հայաստանի Առաջին հանրապետության սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի նկատմամբ այդ թերթի ունեցած վերաբերմունքի քննությունը: Համոզիչ փաստարկներով են ներկայացվում խորհրդային իշխանության հանդեպ թերթի դրսևորած քննադատական կեցվածքն ու դիրքը:

Մենագրության վերջին՝ «Գրականության և արվեստի հարցերը «Մշակ» լրագրում» գլխում վերլուծվում են «Մշակի» արձարձած՝ գրականության և արվեստի, լուսավորության ու կրթության խնդիրները. Լ. Ալոյանը քննության է առել «Մշակի» գրական-գեղարվեստական ու գրաքննադատական նյութերը, թատրոնին ու դրամատուրգիային վերաբերող հրապարակումները՝ համոզիչ եզրահանգումներով ցույց տալով թերթի կատարած, հիրավի, քաղաքակրթիչ դերը XX դ. առաջին տասնամյակների՝ հայ ժողովրդի մտավոր ու հոգևոր վերելքի գործում: Ազգային լուսավորության և դպրոցի զարգացման հարցերում ևս «Մշակը» ունեցել է իր հստակ տեսակետը, որը նույնպես գրքում ներկայացվում է պատշաճ մակարդակով: Ինչպես այս, այնպես էլ ռուս և համաշխարհային գրական արժեքների քարոզչությամբ «Մշակն» ամենուրեք նպաստել է հայ հասարակայնության կուլտուրական մակարդակի բարձրացմանը, նրա մեջ սերմանել գեղագիտական ճաշակ ու նախասիրություն:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Լ. Ալոյանի ներկա գիրքը իր ամբողջության մեջ մի կուռ հետազոտություն է, հայ ազատական հրապարակախոսության և մամուլի գիտական բնութագիր և, միաժամանակ, դրանց հատկանշական կողմերը բացահայտող լուրջ աշխատանք, որն ունի նաև գործնական նշանակություն. այն, որպես հայ մամուլի պատմության դասընթացի բաղկացուցիչ մաս, կարելի է երաշխավորել Հայաստանի բուհերի լրագրության ֆակուլտետներում դասավանդելու համար:

Նշենք նաև, որ գրքում նկատելի են որոշակի թերություններ ու բացթողումներ, լեզվաոճական անհարթություններ և ոչ ճիշտ ձևակերպումներ, սրբագրական սխալներ և այլ բնույթի վրիպումներ: Դրանցից վկայակոչենք մի քանիսը: Այսպես՝ հայտնի է, որ մեծանուն պատմաբան Լեոն կյանքից հեռացել է 1932 թ., իր բնական մահով: Մակայն սույն գրքի 9-րդ էջում ասված է, որ նրա կյանքն ավարտվել է 1937-ին: Ընթերցողի մեջ ակամայից այն միտքն է ծագում, որ Լեոն դարձել է ստալինյան բռնությունների զոհ: Մեկ այլ տեղ կարդում ենք. «կիսում է բարերար ազդեցությունը» (էջ 100), այնինչ պետք է լիներ «կրում է», կամ՝ լույս է ընծայել Մ. Չերազի ոչ թե «Հայ բանաստեղծությունները» (էջ 111), այլ «Հայ բանաստեղծները» նոր աշխատությունը... և այլն:

Մեզ թվում է գրքի երրորդ գլուխը, որն ընդգրկում է «Գրականության և արվեստի հարցերը «Մշակ» լրագրում» և «Լուսավորության և արվեստի հարցերը «Մշակ» լրագրում» միմյանց հաջորդող ենթաբաժինները, ճիշտ կլիներ բաժանել երկու առանձին գլուխների կամ այդ վերնագրերը դնել երկուսի բովանդակությունն ամփոփող մի միասնական վերտառության տակ: Գիրքը չունի նաև վերջաբան ու ամփոփում, գիտական պատշաճ ապարատ, օգտագործված մամուլի, գրականության և արխիվային վավերագրերի ցանկեր և այլն, որոնց առկայությունն այստեղ ոչ միայն ցանկալի էր, այլև անհրաժեշտ նման հրատարակության համար: Գրքի շապիկի ձևավորումը ևս կատարվել է անփույթ: Այնուամենայնիվ, դրանք չեն ստվերում այս արժեքավոր մենագրությունը, որը, փաստորեն, Լ. Գևորգյանի «Մշակի» 1872-1892 թթ. գործունեությանը նվիրված վերոհիշյալ գրքի հետ մեկտեղ, այդ հանրահայտ լրագրի կեսդարյա պատմությունը ամբողջացնելու մի հաջողված փորձ է:

Գրքի մասնագիտական խմբագիրն է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զավեն Ավետիսյանը:

ՄԱՂԱԼՅԱՆ Վ. Ս.

Բանասիրական գիտությունների թեկնածու